State of California-Health and Human Services Agency
Department of Health Care Services
P.O. Box 989009, West Sacramento, CA 95798-9009

?-

XX/XX/XXXX

Mr. John Sample
1234 Sample Street
Anytown, CA 90000

Կարևոր նորություն Ձեր առողջության ապահովագրության վերաբերյալ

Հարգելի John Sample

Մենք լավ լուր ունենք Ձեզ համար: California-ի նոր օրենքի՝ Սենատի օրենք (Senate Bill) (SB) 75-ի պահանջների համաձայն՝ Ձեզ «Medi-Cal»-ի ավելի շատ նպաստներ են հասնում: Հնարավոր է, որ մինչև 19 տարեկան որոշ երեխաներ ամբողջական նպաստներ ստանան: Եթե Դուք համապատասխանեք այդ պահանջներին, ապա «Medi-Cal»-ի Ձեր մասնակի նպաստները կփոխվեն ամբողջականի:

Ի՞նչ է իրենից ներկայացնում նոր օրենքը:

SB 75-ը California-ում ընդունված նոր օրենք է: Այն ամբողջական «Medi-Cal» է տրամադրում մինչև 19 տարեկան երեխաներին: Եվ նշանակություն չունի, թե Դուք ներգաղթողի ինչ կարգավիճակ ունեք: Բայց Դուք պետք է բավարարեք «Medi-Cal»-ի մնացած բոլոր պահանջները: SB 75-ն ուժի մեջ է մտնելու 2016 թ. մայիսի 1-ին կամ դրանից հետո:

Ի՞նչ է ամբողջական «Medi-Cal»-ը:

«Medi-Cal»-ն անվճար կամ ցածր գներով առողջության ապահովագրություն է տրամադրում California-ի որոշ բնակիչների: Ամբողջական «Medi-Cal»-ը վճարում է ո՛չ միայն շտապ օգնության անհրաժեշտության դեպքում տրամադրված բուժօգնության ծախսերը: Այն բժշկական, ատամնաբուժական, հոգեբուժական և ակնաբուժական օգնություն է տրամադրում: Բացի այդ, այն վճարում է ոգելից խմիչքների և թմրադեղերի կախվածությունից տրամադրվող բուժման, Ձեր բժշկի պատվիրած դեղերի համար և ավելին: «Medi-Cal»-ի մասին կարող եք լրացուցիչ տեղեկություններ ստանալ **www.dhcs.ca.gov** հասցեում:

Ես ինչպե՞ս կիմանամ, թե արդյոք ինձ հասնում է ամբողջական «Medi-Cal»:

Դուք փոստով ծանուցում կստանաք: Այն Ձեզ կտեղեկացնի, թե արդյոք Դուք կարող եք «Medi-Cal»-ի ամբողջական նպաստներ ստանալ:

Ի՞նչ է հարկավոր անել այժմ:

Այս պահին «Medi-Cal»-ի Ձեր նպաստների մեջ որևէ փոփոխություն չի կատարվի: Ուստի առայժմ ոչինչ անել պետք չէ: Քանի որ Դուք «Medi-Cal» ունեք, «Medi-Cal»-ի նոր դիմում լրացնելու անհրաժեշտություն չկա: Բայց եթե Դուք փոստով անդամագրումը թարմացնելու փաթեթ ստանաք, հարկավոռ է լրացնել այն: Այդ դեպքում Դուք կշարունակեք ստանալ Ձեր մասնակի նպաստները, մինչ նոր օրենքն ուժի մեջ մտնի: 2016 թ. մայիսի 1-ին կամ դրանից հետո Դուք հնարավորություն կունենաք անցնելու ամբողջական նպաստների: Հնարավոր է, որ շրջանը Ձեզանից անդամագրումը թարմացնելու տեղեկություններ պահանջի: Ցանկացած ժամանակ, երբ որևէ փոփոխություն տեղի ունենա Ձեր տվյալների մեջ, անպայման այդ մասին տեղյակ պահեք Ձեր շրջանային գրասենյակին:

Քանի որ այժմ Դուք «Medi-Cal»-ի ծառայություններ եք ստանում, Դուք պետք է որ «Medi-Cal»-ի ID քարտ ունենաք: Այն կոչվում է «Նպաստների տարբերիչ քարտ» (Benefits Identification Card) (BIC): BIC-ը սպիտակ քարտ է՝ կապույտ տառերով: Բժիշկը կամ կլինիկան պետք է տեսնեն Ձեր BIC-ը, երբ Դուք նրանց այցելում եք բուժսպասարկում ստանալու: Ուստի բժշկի այցելելիս միշտ Ձեզ հետ վերցրեք Ձեր BIC-ը: Եթե Դուք BIC չունեք, խնդրում ենք զանգահարել Ձեր շրջանային գրասենյակ, որպեսզի նրանք Ձեզ նոր քարտ տան:

Ինչպե՞ս եմ ես օգտվելու իմ ամբողջական «Medi-Cal»-ից:

Դուք պետք է անդամագրվեք «Medi-Cal»-ի կառավարվող բուժսպասարկման որևէ առողջապահական ծրագրի («Medi-Cal»-ի ծրագրի): Մինչ «Medi-Cal»-ի որևէ ծրագրի անդամագրվելը՝ Դուք Ձեր ամբողջական նպաստները կստանաք «վճարում ծառայության դիմաց» «Medi-Cal»-ի միջոցով: Այն երբեմն կոչում են Սովորական «Medi-Cal»: Սովորական «Medi-Cal»-ում Դուք կարող եք այցելել «Medi-Cal» ընդունող ցանկացած բժշկի, ատամնաբույժի կամ դեղատուն:

«Medi-Cal»-ի ծրագրում Դուք պետք է այցելեք այն բժիշկներին, որոնք աշխատակցում են տվյալ ծրագրին: Բայց շտապ օգնության անհրաժեշտության դեպքում կամ հղի ժամանակ Ձեզ բուժօգնություն կտրամադրվի: Սակայն «Medi-Cal»-ի ծրագրում Դուք կարող եք նաև այցելել մասնագետների, բուժօգնություն ստանալ որևէ հիվանդության համար կամ վիրահատվել: «Medi-Cal»-ի ծրագիրը կվճարի այդ ծառայությունների համար, եթե դրանք բժշկական առումով անհրաժեշտ են: Դուք փաթեթ կստանաք «Medi-Cal»-ի ծրագրից, որում նշված կլինեն բոլոր նպաստները:

Ի՞նչ է «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիրը:

«Medi-Cal»-ի ծրագիրն առողջության ապահովագրության ծրագիր է, որը վճարում է «Medi-Cal»-ի ծառայությունների համար: Ծրագիրը համագործակցում է սպասարկողների հետ, որոնցից Դուք ստանում եք Ձեր առողջության պահպանման համար անհրաժեշտ ծառայությունները: Ձեր բուժսպասարկումը կառավարելու համար «Medi-Cal»-ի ծրագիրը համագործակցում է բժիշկների հետ: Երբ Դուք ընդգրկված եք «Medi-Cal»-ի որևէ ծրագրում, Ձեր բուժսպասարկումը մեծ մասամբ տրամադրվում է տվյալ ծրագրի կողմից:

Ինչպե՞ս «Medi-Cal»-ի առողջապահական ծրագիր ընտրեմ:

«Medi-Cal»-ի ծրագրի Ձեր ընտրությունը կախված կլինի այն բանից, թե որ շրջանում եք Դուք ապրում: Ամբողջական «Medi-Cal»-ի անցնելուց հետո Դուք փոստով ծանուցում կստանաք: Դա տեղի կունենա մոտ 2 ամիս անց: Ծանուցման մեջ նշված կլինեն Ձեր տրամադրության տակ եղած տարբերակները: Եվ կբացատրվի, թե ինչպես անդամագրվել «Medi-Cal»-ի որևէ ծրագրի: Հարցրեք Ձեր բժշկին, թե արդյոք նա աշխատակցում է «Medi-Cal»-ի Ձեր շրջանում գործող որևէ ծրագրի: Այդ դեպքում Դուք կարող եք ընտրել «Medi-Cal»-ի այդ ծրագիրը:

Մինչև «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրում ընդգրկվելը ինչպե՞ս եմ ես բուժսպասարկում ստանալու:

Այն ամսվա ընթացքում, երբ Դուք լիարժեք «Medi-Cal» ստանաք, Դուք կօգտվեք Սովորական «Medi-Cal»-ից՝ մինչև «Medi-Cal»-ի որևէ ծրագրում ընդգրկվելը: Դուք կարող եք այցելել Սովորական «Medi-Cal» ընդունող ցանկացած բժշկի: Բժիշկ գտնելու համար կարող եք որոնում կատարել «Google»-ում, հարցնել Ձեր ընկերներին կամ այն բժշկին, որին նախկինում այցելել եք: Երբ զանգահարեք բժշկի ընդունարան, հարցրեք, թե արդյոք նա ընդունում է «վճարում ծառայության դիմաց» «Medi-Cal»-ի նոր հաճախորդներ: Կարող եք օգտվել նաև «Medi-Cal»-ի «վճարում ծառայության դիմաց» ծրագրում ընդգրկված բժիշկների այս առցանց ցուցակից.
https://chhs.data.ca.gov/Facilities-and-Services/Profile-of-Enrolled-Medi-Cal-Fee-for-Service-FFS-P/nnz9-spdi:

Ո՞վ է լինելու իմ բժիշկը, երբ ես «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրում լինեմ:

Դուք պետք է «Medi-Cal»-ի Ձեր ծրագրին աշխատակցող բժիշկ ընտրեք: Հարցրեք Ձեր բժշկին, թե արդյոք նա աշխատակցում է «Medi-Cal»-ի որևէ ծրագրի: Եթե Ձեր բժիշկն աշխատակցում է «Medi-Cal»-ի Ձեր շրջանում գործող որևէ ծրագրի, կարող եք պահել այդ բժշկին: Ծրագրին անդամագրվելիս ընտրեք այդ բժշկին:

Եթե Ձեզ օգնություն անհրաժեշտ լինի, «Medi-Cal»-ի ծրագիրը Ձեզ կուղարկի բժիշկների ցուցակը: Ծրագրի անդամների սպասարկման բաժինը նույնպես կարող է օգնել Ձեզ: Եթե Դուք բժիշկ չընտրեք, ծրագիրն ինքը Ձեզ համար բժիշկ կընտրի: Դուք կարող եք ցանկացած պահի փոխել Ձեր բժշկին: Զանգահարեք Ձեր «Medi-Cal»-ի ծրագրի անդամների սպասարկման բաժնի հեռախոսահամարով:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել
http://www.healthcareoptions.dhcs.ca.gov/HCOCSP/Enrollment/default.aspx

Իսկ ատամնաբուժական նպաստները՞:

Լիարժեք «Medi-Cal»-ը նաև ատամնաբուժական նպաստներ է տրամադրում: Այն ներառում է ստուգումներ, ռենտգենյան նկարահանումներ, ատամների մաքրում, լցոնում և ավելին: Եթե Դուք ապրում եք Sacramento-ի կամ Los Angeles-ի շրջանում, Ձեզ փոստով փաթեթ կուղարկվի, որի օգնությամբ Դուք պետք է Ատամնաբուժական կառավարվող սպասարկման (Dental Managed Care) ծրագիր ընտրեք: Ցանկացած այլ շրջանում ապրելու դեպքում՝ Դուք կընդգրկվեք «վճարում ծառայության դիմաց» ատամնաբուժական ծրագրում: Այն կոչվում է «Denti-Cal»: Այն բանից հետո, երբ Դուք սկսեք ամբողջական «Medi-Cal» ստանալ, մենք Ձեզ նամակ կուղարկենք: Դրանում նշված կլինի այն ատամնաբուժական ծրագիրը, որում Դուք ընդրկված կլինեք:

Ի՞նչ տեղի կունենա, եթե ես 19 տարեկան դառնամ:

Եթե առաջիկա վեց ամսվա ընթացքում Դուք 19 տարեկան եք դառնալու, ապա Դուք կարող եք ամբողջական «Medi-Cal» ստանալ և հնարավոր է, որ ավելի մեծ ընտրություն ունենաք: Հնարավոր է, որ Դուք իրավունք ունենաք ընտրելու՝ անդամագրվե՞լ, թե՞ ոչ «Medi-Cal»-ի որևէ ծրագրի: Դա կախված կլինի այն բանից, թե որ շրջանում եք Դուք ապրում: Եթե Դուք չանդամագրվեք «Medi-Cal»-ի որևէ ծրագրի, ապա ծառայություններ կստանաք Սովորական «Medi-Cal»-ով:

Ուրիշ ի՞նչ պետք է ես իմանամ:

Հնարավոր է որ ոմանք իրավունք չունենան «Medi-Cal»-ի որևէ ծրագրում ընդգրկվելու: Դուք չեք կարող որևէ ծրագրում ընդգրկվել, եթե՝

- բնակվում եք այնպիսի մի նահանգում, որտեղ «Medi-Cal»-ի մեկից ավելի ծրագիր է գործում, **և**
- օգտվում եք «ծախսերի բաժնից» **կամ** առողջության որևէ այլ ապահովագրություն ունեք:

Դուք ամբողջական նպաստներ կստանաք՝ Սովորական «Medi-Cal»-ով:

Ամբողջական «Medi-Cal»-ից օգտվելու դեպքում ես «պետության հաշվին ապրող անձ» կհամարվե՞մ:

Առողջապահական ծառայությունների դեպարտամենտը (Department of Health Care Services) (DHCS) Ձեր մասին տեղեկությունները գաղտնի է պահում: DHCS-ը Ձեր մասին տեղեկությունները կօգտագործի միայն «Medi-Cal» ստանալու պահանջներին Ձեր համապատասխանությունը ստուգելու նպատակով:

DHCS-ը չի կարող խորհուրդներ տալ «պետության հաշվին ապրող անձանց» կարգավիճակի մասին:«Պետության հաշվին ապրող անձանց» մասին տեղեկատվական թերթիկը կարդալու համար այցելեք Միացյալ Նահանգների Քաղաքացիության և ներգաղթի ծառայության (United States Citizenship and Immigration Services) (USCIS) կայքը՝ հետևյալ հասցեով.
http://www.uscis.gov/news/fact-sheets/public-charge-fact-sheet: Հարցերի դեպքում խնդում ենք զանգահարել ներգաղթի հարցերով որևէ փաստաբանի կամ իրավաբանական օգնության Ձեր տեղական գրասենյակ:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ DHCS-ի կայքում՝ հետևյալ հասցեով.
http://dhcs.ca.gov/SB75: Սեղմեք «Հաճախակի տրվող հարցեր» հղումը:

Ու՞մ կարող եմ զանգահարել լրացուցիչ տեղեկություններ կամ օգնություն ստանալու համար:

Զանգահարեք DHCS-ի՝ «Medi-Cal»-ի օգնության հեռախոսագծով: Զանգն անվճար է:
1-800-541-5555